ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 358 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 264-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի ապրիլի 10-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Աջակցություն Արցախին» ծրագրի մասին» N 264-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 1-ին կետը «արևային ջրատաքացուցիչներ տրամադրելով» բառերից հետո լրացնել «Ստեփանակերտ քաղաքի,» իսկ «բնակիչներին» բառից հետո՝ «ու ոչ առևտրային կազմակերպություններին» բառերով.

2) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արցախի Հանրապետություն, Ստեփանակերտ քաղաք, Մարտակերտի շրջան, Կոճողոտ և Վերին Հոռաթաղ համայնքներ, բնագավառը՝ սոցիալական».

3) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ստեփանակերտ քաղաքի, Կոճողոտ և Վերին Հոռաթաղ համայնքների բնակիչներ ու ոչ առևտրային կազմակերպություններ»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

16.05.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ